Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կապանի N 1 հիմնական դպրոց

Թեմա՝ ՏՀՏ միջոցների կիրառումը պատմության դասերին

Վերապատրաստող, մենթոր՝ Լուսինե Բալայան

Ուսուցիչ՝ Մարինե Սարգսյան

Կապան 2023

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....3

Գլուխ 1 1.1Համառոտ ակնարկ....5

1.2«Ճանաչողական հետաքրքրություն» հասկացությունը հոգեբանական և մանկավարժական գրականության մեջ....7

1.3Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արժեքը կրթական գործընթացում..8

Գլուխ 2: Փորձարարական հետազոտություն....12

Եզրակացություններ....24

Օգտագործված գրականությունների ցանկ....26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը գիտելիքների
քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն
ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ
գիտես:
Ա. Դիստերվեգ

Թեմայի արդիականությունը: Հանրակրթության ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրը կրթության որակի ապահովումն է: 21-րդ դարը համակարգչային տեխնոլոգիաների դար է, և պետք է արձագանքել աշխարհի արագ փոփոխվող նոր մարտահրավերներին: Դա է պատճառը, որ վերջին տարիների ընթացքում կրթության ոլորտի մասնագետների շրջանում որոշակիորեն բարձրացել է հետաքրքրությունը տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտի նորամուծությունների և հանրակրթական ոլորտում դրանց կիրառման նկատմամբ: Այս համատեքստում անհրաժեշտ է ժամանակակից ուսուցչին զինել տեխնոլոգիական գործիքներով, որոնք էական դրական ազդեցություն կունենան գործընթացի արդյունավետության վրա, կլինեն կիրառելի ու հեշտ: Մեծ է հանրակրթության ոլորտում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ներդրման դերն ու նշանակությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կրթության ոլորտում ուղղված է աշխարհի տարբեր տարածաշրջաններում «տեղեկատվական անհավասարության» հաղթահարմանը: Նոր տեխնիկան, տեխնոլոգիաները, ծրագրային հզոր ապահովումը և վեբծառայությունների համատարած ծավալումը դառնում են մի ամբողջություն, ինչը մեծ հնարավորություններ է ապահովում ցանկացած ժամանակ և ցանկացած տեղում սովորելու համար: Ի տարբերություն ուսուցման ավանդական միջոցների՝ ՏՀՏ-ների կիրառումը նպաստում է ուսումնական հաստատության կառավարման և ուսուցման գործընթացի առավել արդյունավետ և համակարգված կազմակերպմանը: ՏՀՏ-ները ուսուցման արդյունավետության բարձրացման հնարավորություն են ստեղծում թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների համար: ՏՀՏ-ների կիրառմամբ ուսուցիչն արագ կողմնորոշվում է, թե աշակերտները որ հարցերին պատասխանելիս են դժվարացել, և

ըստ այդմ՝ կազմակերպում է դասի հետագա ընթացքը։

Հետազոտական աշխատանքի նպատակն է

- Ուսումնասիրել ուսուցման պրոցեսում ՏՀՏ գործիքների կիրառման պատմությունը,
- դիտարկել ՏՀՏ գործիքների կիրառման մեթոդները դասապրոցեսում,
- պարզել ՏՀՏ գործիքների կիրառման արդյունավետությունը պատմության դասերին։

Վարկած՝ Սովորողների ճանաչողական հետաքրքրությունը և ուսուցման արդյունավետությունը կաճի, եթե ուսուցիչը կրթական գործընթացում համակարգված կերպով ներառի ՏՀՏ։

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են.

- ✓ Ծանոթանալ ուսումնասիրվող նյութի վերաբերյալ հոգեբանամանկավարժական գրականությանը,
- ✓ Ուսումնասիրել ՏՀՏ-ի կիրառման արդյունքում սովորողի ճանաչողական հետաքրքրության բարձրացման հոգեբանական և մանկավարժական ասպեկտները,
- ✓ Ցույց տալ կրթական գործընթացում ՏՀՏ-ի կիրառման արդյունավետությունը՝ որպես դպրոցականների մոտիվացիան զարգացնելու միջոց։

Հետազոտության ընտրանքը՝ Փորձարարական հետազոտությունն անց է կացվել Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի VII^{բ} դասարանում։ Հետազոտությանը մասնակցել է 31 աշակերտ։

Գլուխ 1

1.1Համառոտ ակնարկ

Ուսուցման ակտիվ մեթոդների զարգացումը և կրթական համակարգի կատարելագործումն անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեջ նոր մանկավարժական ու տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման, որոնք կոչված են առավել ակտիվորեն նպաստել սովորողների մտավոր, ստեղծագործական, բարոյական և հուզական զարգացմանը: Խոսքը նախ և առաջ կրթության բնագավառում համակարգչային ու հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման մասին է, որոնց շնորհիվ կարող է ստեղծվել ուսումնական-ճանաչողական մի այնպիսի միջավայր, որը կնպաստի, ինչպես անհատական, այնպես էլ խմբային խնդիրների լուծմանը: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ մեր ժամանակներում ամենաթարմ տեղեկությունն անգամ կես ժամ անց արդեն կարող է հնանալ, ապա պարզ է դառնում, որ նման հասարակության մեջ ապրելու և հաջողության հասնելու համար աշակերտը նախ պետք է կարողանա ճկուն կերպով հարմարվել փոփոխվող պայմաններին և ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել: Դրա համար պետք է կարողանա ստեղծագործաբար և քննադատորեն մտածել, խնդրի լուծման ուղիներ գտնել և ինքնուրույն որոշումներ կայացնել, տեղեկության հետ գրագետ աշխատելու հմտություններ և համակարգչային գրագիտություն ձեռք բերել: Այստեղից մի շատ կարևոր եզրահանգում է բխում. դպրոցական կրթությունն այսօր չի կարող հավակնել վերջնական ու լիարժեք գիտելիքների դարբնոցի դերին, քանի որ յուրաքանչյուր հերթական տեղեկատվական պայթյուն գրեթե ի չիք է դարձնում նախորդի կարևորությունը: Ահա թե ինչու աշակերտներին պետք է նախ և առաջ սովորել սովորեցնել, այսինքն՝ ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու հմտություններ տալ, որի արդյունքում կրթությունը կարող է դառնալ անընդհատ, շարունակական ուսումնառություն՝ ողջ կյանքի համար:

Մեր ժամանակներում, անշուշտ, փոխվել են կրթությանը ներկայացվող պահանջները. բազային գիտելիքներից և նոր գիտելիքների մշտական ձեռք բերումից բացի ժամանակակից աշխատողը պետք է կարողանա նաև արդյունավետ կիրառել տեղեկատվական աղբյուրներն ու պաշարները: Այսօր նրանից պահանջվում է ստեղծագործական մտածողություն, որոշումներ կայացնելու և ողջ կյանքում

սովորելու կարողություն: Ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի կիրառումը ուսումնառության մոտիվացիայի բարձրացման ուղիներից մեկն է:

Ծրագրավորված ուսուցման տեխնոլոգիան առաջացել է 20-րդ դարի 50-ականների սկզբին, երբ ամերիկացի հոգեբան Սքիները առաջարկեց նյութի յուրացման կառավարման արդյունավետությունը բարելավելու համար այն կառուցել որպես տեղեկատվության չափաբաժնի տրամադրման և դրանք վերահսկելու հետևողական ծրագիր: Ծրագրավորված ուսուցումը վերաբերում է համակարգչի օգնությամբ ուսումնական նյութի վերահսկվող յուրացմանը: Ուսումնական նյութը որոշակի տրամաբանական հաջորդականությամբ ներկայացված փոքր տեղեկատվության շարք է:

1.2«Ճանաչողական հետաքրքրություն» հասկացությունը հոգեբանական և մանկավարժական գրականության մեջ

Անձի ակտիվության հզոր դրդապատճառներից մեկը *հետաքրքրությունն* է: Այն իմացական պահանջմունքի դրսևորում է, որն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ երևույթը անձի համար գրավիչ է ու արժեքավոր: Հետաքրքրությունը կարող է սահմանվել որպես երևույթի նկատմամբ դրական գնահատողական վերաբերմունք: Անձի զարգացման տարիքային բոլոր փուլերում հետաքրքրությունները կազմում են մոտիվացիոն հիերարխիայի կենտրոնական համակարգերից մեկը և բնութագրում են մարդուն: Իմացական ոլորտի ընդլայնմանը զուգընթաց անձի հետաքրքրությունները, որոնք սկզբում բնածին դրսևորումներ էին, դառնում են ավելի կայուն, գիտակցված ու կամածին: Նախորդ փուլերին հատուկ հետաքրքրությունները անհետանում են՝ իրենց տեղը զիջելով նորերին: Հետաքրքրությունն ընկած է նպատակադրման պրոցեսի հիմքում: Անձն իր նպատակներն ընտրում է այն ոլորտներից, որոնց նկատմամբ հետաքրքրություն ունի:



Այն հետաքրքրությունները, որոնք մղում են անձին դեպի երևույթների խորը իմացություն, ակտիվացնում են ուսումնական ու հետազոտական գործունեությունը համարվում են ճանաչողական հետաքրքրություններ:[1] Ճանաչողական հետաքրքրությունը սովորողի մոտ ձևավորվում և զարգանում է ուսուցչի շնորհիվ

[1] Б. Г. Мещеряков, В. П. Зинченко, Большой психологический словарь, 2002

սկսած կրտսեր դպրոցական տարիքից, քանի որ հենց այդ շրջանում ի հայտ են գալիս սովորողի հակումներն ու կարողությունները, ձևավորվում են պահանջմունքները: Հիմնական դպրոցում մշակվում, հղկվում են սովորողի ձևավորվող պահանջմունքները: Իմացական հետաքրքրության ձևավորմամբ սովորողի մեջ առաջանում է նպատակ, ինչն էլ դառնում է ուսումնական գործընթացի սուբյեկտը: Հոգեբանամանկավարժական տեսանկյունից ճանաչողական հետաքրքրությունը ուսումնական գործընթացի կատարելագործման կարևոր գործոնն է:

1.3Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արժեքը կրթական գործընթացում

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) ամեն օր ավելի ու ավելի են ներթափանցում կրթական գործունեության տարբեր ոլորտներ: Տեղեկատվական տեխնոլոգիան գործընթաց է, որն իր մեջ ներառում է տեղեկատվության հավաքագրման, մշակման և փոխանցման միջոցների և մեթոդների մի շարք: Համակարգչային ցանցերի ի հայտ գալով՝ դպրոցականներն ու ուսուցիչները նոր հնարավորություն են ստացել արագ տեղեկատվություն ստանալու աշխարհի ցանկացած կետից: Համացանցի միջոցով հնարավոր է ակնթարթային մուտք դեպի աշխարհի տեղեկատվական ռեսուրսներ: ՏՀՏ ցանցային գործիքների օգնությամբ հնարավոր է դառնում լայն հասանելիություն ունենալ կրթական, մեթոդական և գիտական տեղեկատվությանը, մոդելավորել հետազոտական աշխատանքները և իրական ժամանակում անցկացնել վիրտուալ սեմինարներ, դասախոսություններ:

Կրթության մեջ ՏՀՏ-ի ներդրման համար կարելի է առանձնացնել մի քանի ուղղություններ.



ՏՀՏ-ի ներթափանցումը կրթության ոլորտ թույլ է տալիս ուսուցիչներին որակապես փոխել կրթության բովանդակությունը, մեթոդները և կազմակերպական ձևերը: Կրթության մեջ այս տեխնոլոգիաների նպատակն է ամրապնդել սովորողների ինտելեկտուալ կարողությունները տեղեկատվական հասարակության մեջ, ինչպես նաև ապահովում է ուսումնական գործընթացի ակտիվացում և կրթության որակի բարձրացում կրթական համակարգի բոլոր մակարդակներում: ՏՀՏ-ի օգտագործման հիմնական մանկավարժական նպատակներն են՝

- ՏՀՏ-ի կիրառմամբ կրթական գործընթացի բոլոր մակարդակների ակտիվացում
- ուսուցման գործընթացի արդյունավետության և որակի բարելավում, ճանաչողական գործունեության ակտիվության բարձրացում,
- միջառարկայական կապերի խորացում,
- անհրաժեշտ տեղեկատվության որոնման ծավալների ավելացում և օպտիմալացում:
- Սովորողի անհատականության զարգացումը, անձին տեղեկատվական հասարակության մեջ հարմարավետ կյանքի նախապատրաստելը.
- տարբեր տեսակի մտածողության զարգացում

- հաղորդակցման հմտությունների զարգացում
- դժվար իրավիճակում լավագույն որոշում կայացնելու կամ լուծումներ առաջարկելու հմտությունների ձևավորում
- տեղեկատվական մշակույթի ձևավորում, տեղեկատվության մշակման հմտություններ
- առաջադրանքի կամ իրավիճակի մոդելավորման հմտությունների զարգացում,
- փորձարարական հետազոտական գործունեություն իրականացնելու հմտությունների ձևավում:

Գլուխ 2: Փորձարարական հետազոտություն

Ժամանակակից կրթական համակարգում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաները անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացում, խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալմանը, բարձրացնել առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, ստանալ անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ինչպես նաև կիրառել ժամանակակից ուսուցման, գնահատման ու ինքնագնահատման մեթոդներ: Դրանք նպաստում են մանկավարժների աշխատանքի որակի բարձրացմանը, նրանց մասնագիտական գիտելիքների ու ՏՀՏ հմտությունների զարգացմանը: ՏՀՏ-ը հնարավորություն են ընձեռում մուտք գործել մի հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ բազմազան նյութեր ու տեղեկություններ, և ամենակարևորը՝ գիտելիքի ձեռք բերման նպատակով ընդլայնել ուսումնական ծրագրերի ու դասագրքերի շրջանակները, փոփոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ:

Դասապրոցեսում կարելի օգտագործել պատրաստի թվային կրթական ռեսուրսները: Պատրաստի թվային կրթական ռեսուրսների առավելություններն ակնհայտ են: Կարելի է պարզապես վերցնել առկա էլեկտրոնային ռեսուրսը և ուղղակիորեն օգտագործել այն դասի ընթացքում կամ դրա որոշակի փուլում և խնայել ռեսուրսը ինքնուրույն ստեղծելու ժամանակը: Օգտագործում ենք հետևյալ հարթակները.

- ✓ www.thinglink.com
- ✓ www.learningorgs.com
- ✓ www.brainograh.com
- ✓ www.Quzizz.com

Հաճախ ստեղծում եմ Էլեկտրոնային կրթական ռեսուրսներ: Սեփական կրթական ռեսուրս ստեղծելու համար անհրաժեշտ է վերլուծել կրթական ռեսուրսներ ստեղծող գործիքները, գնահատել դրանց արդյունավետությունը և ստեղծել ռեսուրսը սովորողների համար մատչելի ձևով: Խոսքը, առաջին հերթին, սահիկաշարերի

ստեղծման մասին է: Այստեղ ուսուցչին կարող են օգնության հասնել PowerPoint -ը: Սեփական կրթական ռեսուրսներից դասապրոցեսում կարող են կիրառվել նաև գիտելիքի ստուգման էլեկտրոնային թեստերը/ Google Forms/, խաղերը /Quizizz, Learningapps.org/, տեսադասերը և այլն:

Հաճախ դասախոսության ընթացքը զուգորդվում է տեսասահիկներով:/Տե՛ս դասի պլան 2/:







Ապա www.thinglink.com հարթակի օգնությամբ կատարել եմ կշռադատում: Տեսասահիկը օգնել էր դասանյութի մատչելի յուրացմանը, սովորողները առավել ակտիվ էին ու բավականին տեղեկացված ու մոտիվացված:

Ինչպես նշել եմ , դասախոսություններս միշտ զուգորդվում են սահիկաշարով, որը ինքս եմ պատրաստում:


ԿԻԼԻԿԻԱ - PowerPoint
Մարինե Սարգսյան
Файл Главная Вставка Конструктор Переходы Анимация Слайд-шоу Рецензирование Вид Запись Справка
Поделиться
Буфер обмена Слайды Шрифт Абзац Рисование Редактирование
Կիլիկիան գտնվում է
ՓԻԼԱՐՏՈՍ ՎԱՐՉՄՏԻԱՆ 1078-1080
ԳՈՂ ՎԱՍԻԼ 1082-1117թթ
ԿԻԼԻԿԻԱ 1080-1375ԹԹ
Ռուբինյան իշխանություն
•ՀԻՄՆԱԴԻՐ
•ՌՈՒԲԵՆ 1-ԻՆ
•1080-1095թթ
•Իշխանության կենտրոն
•ԿՈՌՈՄՈԶՈՒ
ԿՈՍՏԱՆԴԻՆ 1-ԻՆ
ԹՈՐՈՍ 1-ԻՆ.
ԼԱՄՆ 1-ԻՆ
Слайд 1 из 25 русский
100 %
10:17 23.05.2023


ԿԻԼԻԿԻԱ - PowerPoint
Մարինե Սարգսյան
Файл Главная Вставка Конструктор Переходы Анимация Слайд-шоу Рецензирование Вид Запись Справка
Поделиться
Буфер обмена Слайды Шрифт Абзац Рисование Редактирование
ԿՈՍՏԱՆԴԻՆ 1-ԻՆ 1095-1100
ԹՈՐՈՍ 1-ԻՆ. 1100-1129
ԼԱՄՆ 1-ԻՆ 1129-1137ԹԹ
ԹՈՐՈՍ 2-ՐԴ 1145-1169
ՄԼԵՀ 1169-1175թթ
Слайд 1 из 25 русский
100 %
10:18 23.05.2023





Դասի ներկայացումից հետո quizizz.com-ի միջոցով սովորողները լրացնում են հետևյալ թեստային աշխատանքը:/ Տե՛ս Դասի պլան 1/

1. **Երբ՞ է գահակալել Լևոն 2-րդը.**

1. 1169-1175թթ
2. 1187-1219
3. 1145-1169

4. 1175-1187

2. Ի՞նչ քաղաքներ է գրավել Լևոն 1-ին իշխանը .

1. Մսիս, Ադանա ,Սիս
2. Տարսոն ,Ադանա ,Մսիս
3. Ադանա ,Վահկա ,Մսիս
4. Մսիս,Անավարզա,Տարսոն

3. Ո՞վ է գրավել Երուսաղեմը 1187թ-ին.

1. Ֆրիդրիխ Շիկամորուսը.
2. Լևոն 2-րդը
3. Սալահ ադ Դինը
4. Բոհեմունդ 2-րդը

4. Ե՞րբ է թագադրվել Լևոն 2-րդը:

1. 1202թ
2. 1216թ
3. 1198թ
4. 1187թ.

5. **Ո՞վ է Միսը հռչակել մայրաքաղաք**.

1. Մլեհը
2. Ռուբեն 2-րդը
3. Թորոս 2-րդը
4. Կոստանդինը

6. Որտե՞ղ է գտնվում Կիլիկիան.

1. Փոքր Ասիայի արևմուտքում.
2. Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում.
3. Փոքր Ասիայի հարավ-արևելքում
4. Փոր Ասիայի հյուսիս -արևմուտքում

7. Որտե՞ղ է Ռուբեն իշխանը հիմնել ամենակենսունակ հայկական իշխանությունը.

1. Լեռնային Կիլիկիայում
2. Դաշտային Կիլիկիայում
3. Քարուտ Կիլիկիայում
4. Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում

9. Որն՞ է Գող Վասիլի իշխանության կենտրոնը.

1. Մարաշ
2. Սիս
3. Քեսուն
4. Վահկա

10. Ով՞ է գահակալել 1129-1137թթ.

1. Մլեհը
2. Թորոս 2-րդը
3. Ռուբեն 3-րդը
4. Լևոն 1-ինը

11. 1151թ կաթողիկոսական նստավայր դարձավ.

1. Սիսը
2. Հռոմկլան

3. Անավարզան
4. Տարսոնը

12. Ե՞րբ մամլուքները գրավեցին կաթողիկոսանիստ Հռոմկլան.

1. 1254թ
2. 1307թ
3. 1266թ
4. 1292թ

13. Ովքե՞ր են ունիթորները.

1. Հայոց եկեղեցին միայն կաթոլիկ եկեղեցու հետ միավորման կողմնակիցներ
2. Հայոց եկեղեցին միայն ուղղափառ եկեղեցու հետ միավորման կողմնակիցներ
3. Հայոց եկեղեցին քրիստոնեական մյուս եկեղեցիների հետ միավորման կողմնակիցներ
4. Հայոց եկեղեցին այլ եկեղեցիների հետ միավորման հակառակորդներ

14. Ի՞նչ իրադարձություն է տեղի ունեցել 1254թ-ին

1. Մոնղոլները պարտության մատնեցին Իկոնիայի սելջուկներին
2. Հեթումը և Մանգու Մեծ խանը կնքեցին հայ-մոնղոլական դաշինքը
3. Տեղի ունեցավ Մառիի ճակատամարտը
4. Մամլուքները գրավեցին Այաս նավահանգիստը

15. Ի՞նչ է պատկերված նկարում.

1. Հռոմկլայի բերդը
2. Վահկա բերդը

3. Անավարզա բերդը
4. Սիս քաղաքի միջնաբերդը

16. Ստորև թվարկվածներից որո՞նք են Կիլիկյան Հայաստանի նշանավոր նավահանգիստները

1. Այաս և Կոռիկոս
2. Մսիս և Այաս
3. Վահկա և Այաս
4. Կոռոմոզոլ և Կոռիկոս

17. Ե՞րբ և ովքե՞ր գրավեցին գրավեցին Սիս մայրաքաղաքը.

1. 1375թ ապրիլի 16-ին , մամլուքները և կարամանները
2. 1373թ ապրիլի 16-ին, մոնղոլները և կարամանները
3. 1342թ օգոստոսի 23-ին, սելջուկները և մամլուքները
4. 1291թ օգոստոսի 23-ին մամլուքները և կարամանները

18. Ու՞մ էր պատկանում Լամբրոնի բերդը.

1. Ռուբինյաններին
2. Գող Վասիլին
3. Փիլարտոս Վարաժնունուն
4. Հեթումյաններին

19. Ի՞նչ է պատկերված նկարում

1. Լևոն Մեծագործի թագադրությունը
2. Անտիոքի դուքսի և Լևոնի հանդիպումը
3. Լևոնի հաղթական մուտքը Անտիոք

4. Զաբելի թագադրությունը

20. Ի՞նչ հետևանք ունեցավ ունիթորների և հակաունիթորների պայքարը Կիլիկիայի համար

1. Կիլիկիան դարձավ կաթոլիկ պետություն
2. Կիլիկիան միավորվեց Անտիոքին
3. Խախտվեց երկրի միասնությունը և երկիրը թուլացավ
4. Կիլիկիան զրկվեց Արևմուտքի ռազմաքաղաքական օժանդակությունից

21. Թվարկվածներից ովքե՞ր են հանդիսացել Հեթումյան արքայատոհմի արքաներ

1. Լևոն 3-րդ և Օշին
2. Օշին և Ռուբեն 3-րդ
3. Լևոն 1-ին և Լևոն 4-րդ
4. Ռուբեն 3-րդ և Հեթում 3-րդ

22. Ո՞ր իշխաններն են նվաճել Մսիս, Ադանա, Տարսոն քաղաքները

1. Մլեհ
2. Հեթում 1-ին
3. Լևոն 1-ին
4. Լևոն 3-րդ
5. Թորոս 1-ին

23. Ո՞ր բերդն է պատկերված։

Այս դասը փորձել եմ առանց ՏՀՏ միջոցների և ՏՀՏ միջոցներով: Արդյունքները ներկայացված են դիագրամում:





ԿՈՍՏԱՆԴԻՆ
1005-1050

ԱՌՈՆ 1-ԻՆ

Եզրակացություններ

Ամփոփելով մեր ուսումնասիրության արդյունքները՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

- ✓ ՏՀՏ միջոցները ուսուցման և ուսումնառության գործընթացը դարձնում են ավելի հետաքրքիր, բովանդակալից՝ ներկայացնելով անհրաժեշտ տեղեկատվությունը անհրաժեշտ ժամանակին:
- ✓ Մշակված էլեկտրոնային առաջադրանքների կիրառումը դասագործընթացի ժամանակ նպաստում է աշակերտների ուշադրության, դասերի հանդեպ հետաքրքրության մեծացմանը, և փորձը ցույց է տալիս, որ երեխաներն ուսումնական նյութը առավել հեշտությամբ յուրացնում են ՏՀՏ գործիքների կիրառման արդյունքում:
- ✓ ՏՀՏ-ն անհրաժեշտ է տեղեկատվական հասարակության ձևավորման համար:
- ✓ ՏՀՏ միջոցները հնարավորություն են տալիս զարգացնել սովորողների գեղարվեստական և ստեղծագործական կարողությունները և լուծել նոր խնդիրներ, որոնք դեռևս լուծված չեն եղել:
- ✓ Դասի արդյունավետության բարձրացման միջոցներից մեկն է ժամանակի հետ համընթաց քայլելը:
- ✓ Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մերօրյա դպրոցը չունի բավարար ՏՀՏ ռեսուրսներ/ էլեկտրոնային գրատախտակ, համակարգիչներ, տեսացրիչներ/, որոնք կարող է ուսուցիչը կիրառել ամեն դասաժամին և արձանագրել ցանկալի արդյունք:

Օգտագործված գրականությունների ցանկ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ
2. Ուսուցման արդյունավետ հնարներ, 2020
3. Б. Г. Мещеряков, В. П. Зинченко, Большой психологический словарь, 2002

Հավելված

Դասի պլան 1

Դասարան՝ VII բ

Ուսուցիչ՝ Մարինե Սարգսյան

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասի թեման՝ Լևոն Մեծագործ

Դասի տիպը՝ Նոր նյութի հաղորդման դաս

Դասի նպատակը՝

- Նպաստել Լևոն II-ի կառավարման իշխանական և թագավորական շրջանի մասին գիտելիքների ձեռքբերմանը։
- Զարգացնել կարևոր դեպքերը և իրադարձությունները համեմատելու, դիրքորոշում հայտնելու, վերլուծելու, արժևորելու կարողությունները։
- Սովորեցնել արժևորել անհատի պատմական դերը։
- Զարգացնել համագործակցելու հմտություններ։

Դասի վերջնարդյունքները՝

- ✓ Կարողանա ներկայացնել և բացատրել տվյալ ժամանակաշրջանի կարևոր դեպքերը, իրադարձությունները։
- ✓ Վերլուծել հայկական պետականության հռչակման ներքին և արտաքին նախադրյալները։
- ✓ Արժևորել Կիլիկիայում ստեղծված թագավորության դերը հայոց պետության պատմության մեջ։
- ✓ Գնահատել Լևոն II-ի դերը հայոց պատմության մեջ։

Միջառարկայական կապերը- Աշխարհագրություն, հայոց լեզու և գրականություն, արվեստ, ռազմագիտություն

Ընդհանրական կամ խաչվող հասկացություններ-Անհատներ և հարաբերություններ, կողմնորոշում ժամանակի և տարածության մեջ։

Դասի կահավորում-դասագիրք, քարտեզ, նկարներ, ՏՀՏ միջոցներ։

Դասի ընթացքը

Ուսուցիչը հարցերի միջոցով անդրադարձ է կատարում նախորդ դասին.

1. Արտաքին քաղաքական ի՞նչ իրադարձություններ նպաստեցին Կիլիկիայում հայկական իշխանության վերականգման գործընթացին։

2. Ներկայացրե՛ք հայկական պետության վերականգնման ընթացքը Կիլիկիայում։
3. Ի՞նչ ձեռքբերումներ ունեցավ Կիլիկյան Հայաստանը Թորոս II-ի և Մլեհի օրոք /սահիկաշարի օգնությամբ/

Օգտագործվում է «ժամանակի գիծ» մեթոդը։

1080	1098	1104	1107	1132	1137	1145	1151	1152

Խթանում- Էլեկտրոնային գրատախտակին ցուցադրվում է 2 նկար.

Ջուլիանո Ջասո «Լևոն Մեծագործի թագադրություն» և Լևոն Մեծագործի նկարը՝ թագը գլխին

Ուսուցիչը հարց է ուղղում դասարանին՝ կիրառելով «կախարդական բյուրեղ» հնարը։

1. Ի՞նչ եք կարծում՝ ով է պատկերված նկարում։
2. Փորձե՛ք ներկայացնել նկարի բովանդակությունը։
3. Նկարում ի՞նչ խորհրդանիշներ եք տեսնում։

Սովորողները փորձում են կռահել՝ ինչի մասին է նոր դասը։

Նոր նյութի ներկայացում։ Կարճ դասախոսության և սահիկաշարի օգնությամբ ուսուցիչը ներկայացնում է դասի ընդհանուր բովանդակությունը, տեղեկություններ հաղորդում աշխարհաքաղաքական իրողությունների և պատմության շրջադարձային իրադարձությունների մասին, որոնք նպաստեցին Կիլիկիայում թագավորության հռչակման գործընթացին։

Իմաստի ընկալում- Դասարանը բաժանվում է խմբերի՝ ըստ իմաստային բաղադրիչների։

I խումբ- Իրավիճակը Մերձավոր Արևելքում XII դարի վերջին։

II խումբ – Լևոն II-ի և խաչակիրների փոխհարաբերությունները։

III խումբ – Թագավորության հռչակումը։

IV խումբ – Լևոնի ներքին քաղաքականությունը։

V խումբ- Լևոնի արտաքին քաղաքականությունը։

Խմբերը ներկայացնում են դասի իմաստային միավորները։ Պատասխանում հարցերին, գրատախտակին կատարում գրառումներ ։

Ինքնուրույն աշխատանք: Ուսուցչի հանձնարարությամբ սովորողները ինքնուրույն պատասխանում են դասագրքի 2,4,5 հարցերին, լրացնում կենսագրական բանաստեղծությունը:

Լևոն II-ի նկարը

1. Անունը
2. Երբ է ապրել
3. Որտեղ է ապրել
4. Բնավորությունը
5. Սիրում է
6. Ինչ է զգում
7. Ինչից է վախենում
8. Ինչ է տալիս
9. Ուզում է տեսնել
10. Ինչի կարիք ունի
11. Անձնական որակը
12. Ինչ խնդիր ունի
13. Մականուն կամ կեղծանուն
14. Ինչպես ես գնահատում նրա գործունեությունը

Կշռադատման փուլ

- Հարցերի միջոցով ուսուցիչը ստուգում է աշակերտների սովորածը:
- Կատարում են աղյուսակային աշխատանք

Տարեթիվ	Իրադարձություն	Այլ տեղեկություններ



- Ուսուցչի օգնությամբ ուղղորդված հարցերի միջոցով աշակերտները քննարկում, ներկայացնում , բացատրում , կարևորում, արժևորում են Լևոնի՝

որպես պատմական անհատի դերը պատականության վերականգնման գործում:

- Աշակերտները կարդում են գրած բանաստեղծությունները և փակցնում գրատախտակին:

Անդրադարձ- Կիսատ նախադասությունների լրացում

Տնային աշխատանք- Thinglink.com կայքի միջոցով կատարել ճանապարհորդություն դեպի Կիլիկիա :

Գրել փոքրիկ շարադրություն՝ «Դեպի Կիլիկիա ճանապարհորդության մասին» վերնագրով:

Դասի պլան 2

Դասարան՝ VII

Ուսուցիչ՝ Մ. Սարգսյան

Առարկա՝ Հայոց պատմություն

Դասի թեման՝ Զաքարյանների իշխանապետությունը

Դասի նպատակը՝

- Նպաստել օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի և Զաքարյանների վերաբերյալ գիտելիքների ձեռքբերում:
- Տվյալ ժամանակաշրջանի կարևոր փաստերը, իրադարձությունները, գործիչների գործունեությունը բացատրելու, համեմատելու, վերաբերմունքը արտահայտելու, արժևորելու կարողություններ զարգացում:

Վերջնարդյունքներ՝

- ✓ Կարողանա ներկայացնել և բացատրել իշխանական տոհմի նշանավոր ներկայացուցիչներին, նրանց հայրենանվեր գործունեությունը, ազատագրված տարածքները:
- ✓ Արժևորի իշխանական տոհմի դերը վրացական պետության կյանքում:
- ✓ Վերլուծի հայ-վրացական զինակցության պատճառներն ու արդյունքները:

Ընդհանրական կամ խաչվող հասկացություններ՝

- Անհատներ և հարաբերություններ:
- Կողմորոշում ժամանակի և տարախության մեջ:
- Պատճառներ և հետևանքներ:

Միջառարկայական կապ՝ հայոց լեզու, գրականություն, արվեստ, ռազմագիտություն

Դասի կահավորում՝ դասագիրք, սկզբնաղբյուրներ, քարտեզ, նկարներ, ՏՀՏ միջոցներ

Մեթոդներ, հնարներ՝ ԽԻԿ համակարգ, մտագրոհ, դասախոսություն, կլոր սեղան

Դասի տիպը՝ համակցված

Դասի ընթացքը

Հին նյութի ամփոփում.

- Աշխարհաքաղաքական ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան տարածաշրջանում սելջուկ-թուրքերի արշավանքների հետևանքով:
- Գոյաբանական ի՞նչ խնդիրների բախվեց հայ ժողովուրդը:

Խթանման փուլ

Մտագրոհ մեթոդի միջոցով ուսուցիչը հարց է ուղղում դասարանին.



Դուք ի՞նչ կանեիք:

Աշակերտների պատասխանները գրառվում են: Արդյունքում սաները պիտի կռահեն դասի թեման և ներառվեն դասի յուրացման գործընթացին:

Իմաստի ընկալման փուլ

Իմաստի ընկալման փուլում ուսուցիչը հանդես է գալիս կարճ դասախոսությամբ: Սահիկաշարի միջոցով ներկայացվում է դասի բովանդակությունը, իմաստային միավորները: Բանավոր շարադրանքը զուգակցվում է զննական մեթոդների կիրառմամբ՝ քարտեզ, նկարների ցուցադրում և այլն:

Ապա դասարանը բաժանվում է խմբերի ըստ իմաստային միավորների:

I խումբ-Հայ-վրացական զինակցությունը:

II խումբ – Հայկական տարածքների ազատագրումը:

III խումբ- Զաքարյանների իշխանապետության առաջացումը, նշանակությունը:

Խմբերը ներկայացնում են դասը, պատասխանում հարցերին, կատարում գրառումներ:

Ինքնուրույն աշխատանք

- Էջ 107-ի քարտեզի օգնությամբ գտնել Զաքարյանների կողմից ազատագրված քաղաքները:
- Որոշել Զաքարյանների հարևան պետությունների սահմանները:
- Փորձել բացատրել իշխանապետություն հասկացությունը:

Կշռադատման փուլ

Ուսուցիչը ստուգում է աշակերտների յուրացման մակարդակը:

Աշակերտների ձեռք բերած գիտելիքների ստուգումը իրականացվում է «կլոր սեղան» գործողությամբ: Աշակերտից աշակերտ փոխանցվող թղթի վրա հերթով գրում են օրվա սովորած փաստերը, դեպքերը: Թուղթը փոխանցվում է այնքան ժամանակ, որքան կարող են գրառումներ կատարել : Խմբի անդամներից մեկը ամբողջ դասարանի համար ընթերցում է խմբի աշխատանքը:
Խմբի թղթերը հավաքելու դեպքում ուսուցիչը կարող է ճշտել, թե որքանով են աշակերտները յուրացրել դասը (ձևավորող գնահատում):

Տնային առաջադրանք

- Կազմել սահիկաշար:
- Կատարել վիրտուալ ճանապարհորդություն դեպի Զաքարյան Հայաստան:
- Դիտել հղումը՝ https://www.youtube.com/watch?fbclid=IwAR3-n-j49XMJRqYfh_SXrUrUQcxpj0Vp3HlOhAU3oAkTbrJZZ2rsPGhQGoE&v=IWn3AS1AP_o&feature=youtu.be